օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, հետևաբար նման պայմաններում հայցը ենթակա է բավարարման:

6. Դատական ծախսերը

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է բավարարման, սակայն հայցվորը նշված նորմի ուժով պահանջ չի ներկայացրել պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, ուստի դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենին 29.06.2023 թվականի թիվ 0497 գրությունը և դրա հիման վրա Լիազոր մարմնին ուղարկված որոշումը՝ «Խաչպար» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը չեղյալ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել «Խաչպար» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը:

3. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**